

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, «Մեծերա» եանդեպը արևմտեայ լուսավորական-դեմոկրատիկան շարժման մեջ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977, 327 էջ:

Հայ պարբերական մամուլի պատմության ստեղծման անհետաձգելի գործն այսօր իր վրա է հրավիրել մամուլի սակավաթիվ պատմաբանների ուշադրությունը: Պարբերական մամուլի ընձեռած նյութի համակողմանի ընդգրկումը և խոր վերլուծությունը, պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունների վերհանումը, բուն երկրից դուրս ստեղծված պարբերականների շաղկապումը համապատասխան զաղթօջախների ուրույն պահանջների և խնդիրների հետ, մարքս-լենինյան մեթոդոլոգիայի ոգով պատմական ժամանակաշրջանի հայ հասարակական կյանքի կարևորագույն երևույթների արժեքավորումը հարցեր են, որոնցով առաջնորդվում են մամուլի մեր պատմաբանները:

Այս առումով ողջունելի է պատմական գիտությունների թեկնածու Միքայել Հակոբյանի «Մեծերա»-ին հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ՝ մենագրությունը: Մ. Հակոբյանն ընտրել է արևմտահայ մամուլի պատմության ուսումնասիրության գործը, որը կապված է մի շարք դժվարությունների հետ: Առաջին հերթին համապատասխան արխիվների բացակայությունը կամ եղանակներից օգտվելու անհնարինությունը, որոշ զաղթօջախների վերացումը (Զմյուռնիա), պարբերականների հավաքածուների թերին՝ լրացուցիչ պարտականություններ են առաջադրում այդ հատվածի մամուլի ուսումնասիրողներին: Այդ պարտականությունները ծանր են, աշխատատար, պահանջում են տարիների անխոնջ մաքառում, մեծ հետեղականություն և նվիրում ընտրած գործին:

Մ. Հակոբյանը պատվով է կատարել ստանձնած գործը: Հիմնովի, ի՞նչ է տալիս մեղ «Մեծերա»-ին նվիրված ուսումնասիրությունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ թեման քիչ հնարավորություններ է ընձեռում տպավորել մենագրություն ստեղծելու համար. միայն երեք գիրք, իսկ շորորոգը պատրաստվել, բայց չի հրատարակվել:

«Մեծերա»-ի երեք գրքերի պրիզմայից Մ. Հակոբյանը սովորաբար պատմագիտության է ներկայացնում մի ամբողջ ժամանակահատված: Իհարկե, չի կարելի ասել, թե Զմյուռնիայի գաղութի կյանքն ուսումնասիրված չէր և գրքի հեղինակը մեղ նոր է ծանոթացնում զաղթօջախին և նրա գործիչներին:

Աշխատության ներածությունն արդեն ամփոփ մի ուսումնասիրություն է Զմյուռնիայի զաղթօջախի մշակութային կյանքի մասին: Այստեղ հստակորեն բնութագրվում են տեղի պատմամշակութային կյանքի հիմնական էտապները և այն գործիչները, որոնց վաստակը մեծապես արգասավորել է հայ հասարակական կյանքը Զմյուռնիայում:

Մեր կարծիքով գրքի արժանիքներից առաջինը Գրիգոր Մսերյանի կյանքի և գործունեության վերհանումը և նրա վաստակի վերազնահատումն է: Շատ հետաքրքրական է Մսերյան-թարգմանչին նվիրված բաժինը, որը բացահայտում է այդ բաղմաշնորհ գործչի ոչ միայն թարգմանական աշխատանքի բաղմազանությունը և դրա կուլտուր-հասարակական նշանակությունը, այլև վեր է հանում Մսերյան-թարգմանչի մեթոդի առանձնահատկությունները և ակադեմիկական ծառայությունները լեզվաշինության ասպարեզում: Մ. Հակոբյանը թարգմանական գրականության հարցը քննում է լայն ֆոնի վրա, ափսոսանքի արդարացի խոսքով ընդգծելով մեր գրականագիտական աշխատանքի որոշ հապաղումն այդ բնագավառում. «Հայ ժողովուրդը առաջին է ընթանում այն ժողովուրդների շարքում, որոնք մայրենի լեզվով թարգմանել և հաղորդակից են եղել համաշխարհային պատմագրության և գրականության լավագույն նմուշներին» (էջ 65): Նվ սակայն, շարունակում է հեղինակը, «անհասկանալի ու անբացատրելի է մնում մեր տեղական անտարբերությունը հայ թարգմանիչ-մշակների ու նրանց շերմեռանդ գրական աշխատանքի նկատմամբ» (էջ 65):

Է՛լ ավելի լայնացնելով իր ուսումնասիրության շրջանակները, Մ. Հակոբյանը բացում է Գ. Մսերյանի կյանքի մի նոր էջը՝ նրա առնչությունները հայ ազատագրական շարժումների հետ: Այն փաստերը, որոնց վրա հենվում է պատմաբանը, թվում են այնքան անշնչա, որոնց վրա հազիվ թե կանգ առնի սովորական հետազոտողի ուշադրությունը: Սթանչլիի պատկերաց-
նելով ժամանակաշրջանը և միջավայրը, Մ. Հակոբյանն առանձին ասույթների, հուշագրություն-
ներում պահպանված արտահայտությունների համադրությամբ ստեղծում է մի վարկած, որին չի կարելի չվստահել: Եվ այսպես, 1880-ական թվականների սուլթանական Քուրթիայի պատ-
մության մասյլ հորիզոնում բարձրանում է Գ. Մսերյանի առնական կերպարը, որը զրկված
տպարանից, թերթից, կամովին թողած թարգմանական գործունեությունը, զինվորագրվում է
առավել հրատապ մի գործի՝ հայկական հարցի լուծման ուղիների որոնմանը:

Մենագրության երկրորդ բաժինը նվիրված է ՎՄԽտեորա-ի քննությանը: Իր հակակղե-
րական միտածությամբ և առաջավոր գիտության նվաճումների պրոպագանդամբ հանդեսը
հայ հասարակական կյանքում անվերապահ առաջադիմական դեր էր կատարում: Այս առու-
մով ուշագրավ էր էմիլ Լիթրեի և Պրոսպեր Փիլարի ուսումնասիրությունների տպագրությունը
հանդեսի էջերում: Բնական գիտությունների լրջախոհ պրոպագանդումը զուգակցվում էր կրո-
նական դոգմաների, կղերականության և ամբրիկյան միսիոներների դեմ Գ. Մսերյանի ծավա-
լած հետևողական պայքարին: Առանձնապես նշանակալից երևույթ էր է. Ռոդիդիսի «Հովհաննա
Բարուհին» երգիծական վեպի տպագրությունը՝ հորասանճյանի թարգմանությամբ:

Ի տարբերություն գիտական հարուստ բաժնի՝ ՎՄԽտեորա-ն անհամեմատ քիչ տեղ է
հատկացրել գրականության հարցերին, բայց այդ փոքրաթիվ նյութերն էլ ուսումնասիրվել են
պատշաճ խորությամբ: Գրքի հեղինակի համար չկա փոքր և մեծ հարցերի հարաբերական
ընկալում: Որ հարցին էլ անդրադառնում է Մ. Հակոբյանը, այն քննում է ամենայն խորու-
թյամբ: Նա կամ հասնում է առեղծվածի ցանկալի լուծմանը, և կամ գրականագետներին ու
պատմաբաններին է ներկայացնում մեկ կամ մի քանի անհայտներով հերթական խնդիրը: Այս-
պես, ՎՄԽտեորա-ն տպագրել է «Տառուտ»-ի առաջին մասը: Մ. Հակոբյանն առաջարկում է
արծեքավորել թարգմանչի՝ Մ. Նուպարյանի, աշխատանքը, այն համեմատել ոչ միայն ֆրանս-
սիական և գերմանական բնագրերի, այլև Ք. Թերզյանի և Մ. Մելքոնի կատարած թարգմա-
նությունների հետ: Այնուհետև պահանջում է որոնել և գտնել այն հայ գործչին, որի մասին
եղած հիշատակության համաձայն նա գրում էր «Տառուտ»-ի երաժշտությունը:

Ենդիներին թիվը մեծ է: Հեղինակը հայ պատմաբանների ուշադրություն է հրավիրում
Եվրոպայի հայ ուսանողների միության գործունեության և նրանց հրատարակությունների հար-
ցի վրա: Գտնում է, որ ժամանակն է ուսումնասիրել միսիոներների, մանավանդ ամերիկյան,
մշակութային գործունեությունը հայկական շրջաններում, բացահայտել առաջադեմ հայ հրապա-
րակախոսների պայքարի նշանակությունը նրանց դեմ, իբրև հայ ժողովրդի ազգապահպանու-
թյան և ազատագրության համար ծավալած պայքարի կարևոր կողմերից մեկը:

ՎՄԽտեորա-ին նվիրված ուսումնասիրության անվերապահ հաջողություն է ձևավորվել
ազատագրական պայքարի դասերն ենթաբաժինը: Հեղինակը հենվելով այն փաստի վրա, որ
Գ. Մսերյանը տպագրել է Եմենիցի «Տոթոս Ցավելաս» ակնարկը և հաշվի առնելով նրա ծրա-
գիրը՝ շարունակաբար հրապարակելու նույն հեղինակի ակնարկները՝ նվիրված Մարկ Բոցա-
րիսին և Անդրեյ Վոքոս Միսուլիսին, մի շարք հետաքրքրական եզրահանգումներ է կատարում:
ՎՄԽտեորա-ն, գրում է Մ. Հակոբյանը, «լուրջ քայլ է կատարել ազգային-ազատագրական
պայքարի գաղափարախոսության արժարժման ասպարեզում, էական դեր է խաղացել Հունաս-
տանի անկախության համար մղված պայքարի դասերը հայ զանգվածներին ներկայացնելու
և դրանով իսկ հայության որոշակի շերտերին թուրքական լծի դեմ ոտքի հանելու գործում»
(էջ 224): Սակայն լրավարարվելով այդ հարցադրումով, հեղինակը խոսում է Պաշտպան
հայրենյաց խմբակի և հունական «Ֆիլիկի հետերի» խմբակի սկզբունքների նմանության,
«Ազատության ավետաբեր»-ի էջերում հունական ազատագրական շարժումների նկատմամբ
արտահայտված համակիր մտքերի մասին:

Հունական ազատագրական շարժումների պատմությունը հեղինակն ուսումնասիրել է
նյութի շատ լայն ընդգրկումով: Այդ բաժնի ապոթեոզն է հունական ժողովրդի մեկ մասի՝ սու-
լեցիների, դյուցազնական պայքարին նվիրված հատվածը: Առաջին հայացքից ծավալուն թվա-
ցող այս ակնարկը, որն ընդգրկում է հեղինակի պատմա-բանասիրական համառ պրպատումների
արգասիքը եղող բազմապիսի ինքնատիպ նյութեր ու փաստեր, գրքի էական բաղկացուցիչ
մասն է կազմում և նոր լույս է սփռում ժամանակի հայ ազատագրական շարժումների գաղա-
փարախոսության կազմավորման հարցի վրա:

Վկայակոչելով անցյալ դարի հայ մամուլի հրապարակած նյութերը՝ նվիրված Նվրոպայի ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին, Մ. Հակոբյանը մատնանշում է. «դա առհասարակ եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի կարևոր մի ելակետը, որի խաղացած դերը, թեև տակավին չուսումնասիրված, բավականաչափ մեծ է» (էջ 181)։

Գրախոսվող ուսումնասիրությունը հարուստ է բանասիրական գյուտերով, ուշագրավ վարկածներով, մեծարժեք ծանոթագրություններով։ Այսպես, հեղինակի բանասիրական անուրանալի շնորհի արտահայտություններից է «Հովհաննա Բաբուհին» երգիծական վեպի շուրջ կատարված հետազոտական աշխատանքը։ Հեղինակը մեծ հմտությամբ է հայտնաբերել «Վարդապետություն իրականին» հոդվածի հեղինակին (Պրոսպեր Փիշար)։ Եջգրտել է «Հուլյանների պատերազմական երգը» բանաստեղծության հեղինակի ինքնությունը։ Շատ բնորոշ է և Հորո գրական կնդդանվան վերծանումը։ Այն պատկանում է արևմտահայ հրապարակախոս Նշան Ծիվանյանին, որին վերաբերող տվյալները Մ. Հակոբյանը ձեռք է բերել Ա. Ալպոյաճյանից, վերջինիս խնդրելով գրել Ն. Ծիվանյանի կենսագրությունը։ Մեծ է Մ. Հակոբյանի որոնումների շառավիղը։ Նրան նամակներ են ուղարկում Փարիզից և Մոսկվայից, Կիևից և Բելրուսից, Սրուսադեմից և Հալեպից, նա միկրոթապավեններ է ստանում Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան և էնեին-գրադի Մ. Խ. Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարաններից։ Այս ճանապարհով ահա մենագրություն մեջ ստեղծվում է ներքին մի բաժին՝ ծանոթագրությունների բաժինը, որը հսկայական բանասիրական նյութ է տալիս ընթերցողին։

Աշխատության մեջ թերևս կարելի է նշել որոշ էջեր, որոնք ծանրաբեռնված են՝ փաստական նյութի և բանասիրական հետախուզումների ծավալի առումով։ Կարելի է հիշատակել և առանձին տեղեր, որոնք մոտ են կրկնության։ Թերևս հեղինակն անարդար է՝ խորհել Աշրգյանին տված իր հախուռն պիտակներով։ Բայց, իհարկե, դրանք բնավ չեն խչեցնում աշխատության արժեքը։ Իր ամբողջության մեջ Մ. Հակոբյանի «Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ մենագրությունը հայ մամուլի պատմության ստեղծման ճանապարհին կարևոր նվաճում է, մամուլի պատմության գիտական ուսումնասիրության լավ օրինակ։

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու